ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՈՉ ԷԱՃԱՊՁԲ-22/10/Բ/2/ԻԾ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Գլխարկի երեսացուն կարվում է գունաքողարկող ոստիկանական կտորից՝ 49% բամբակ 51% պոլիէսթեր APT.-4c5-KB, 210գ մակերեսային խտությամբ, պատկերը-4735/1 և սև գույնի արհեստական մորթուց: Գլխարկը բաղկացած է ոստիկանական գունաքողարկվող գործվածքով կոշտ հովհարից, կողամասերից, հատակից և սև գույնի արհեստական մորթե ականջակալներից: Հովհարը և ներքնամասը՝ գունաքողարկվող կտորից: Հովհարի ներսից տեղադրվումէ 2-3 մմ հաստության պլաստմասայե միջադիր: Հովհարի լայնությունը 6 սմ: Գլխարկաբոլորքի ներքնամասում ամբողջ շրջագծով արտաքինից մշակված է 2սմ լայնության երիզ՝ գունաքողարկվող կտորից: Գլխարկաբոլորքի առջևի կենտրոնական մասում ամրացվում է ՀՀ ոստիկանության փոքր գլխարկանշանը: Աստառը մգդակարվում է 5սմ կողմերով շեղանկյունաձև՝ սև գույնի բամբակյա կտորից: Մորթին եզրերից մշակվում է 5մմ լայնության երեսացուի գործվացքից տիսմայով: Տաքացվող ներդիրը ներսից մշակվում է ամրացնող շերտերով և 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով: Գլխարկաբոլորքի բարձրությունը 9սմ: Հետնամասի մորթու լայնությունը մեջտեղում՝ 8,5 սմ: Ականջակալների եզրերը ամրացվում են գլխարկահատակին կիպ: Ականջակալների դարձերեսին, ականջակալի երկայնքով քունքամասերի եզրերից կարվում են են 2սմ լայնության սև գույնի կպչուն ժապավեններ՝ գլխարկաբոլորքին ամրացնելու նպատակով:Նույն ուղղությամբ գլխարկաբոլորքի բարձրությամբ ևս կարվում են 2սմ լայնության սև գույնի կպչուն ժապավեններ: Ականջակալների գլխարկահատակի միացման մասում՝ ականջակալի և գլխարկահատակի վրայից ականջակալների ձևվածքով (կիսաէլիպսաձև) կարվում են սև գույնի կպչուն ժապավեններ: Գլխարկի ներսում աստառի վրա ճակատային մասի

	մեջտեղում կարվում է 5,5 x 5 սմ չափսի արհեստական կաշվե կամ համարժեք պաշտպանիչ շերտ: Գլխարկահատակի կենտրոնում ներսից դրոշմվում է շեղանկյուն դրոշմ, որի վրա արտացոլվում է գլխարկի չափսը, արտադրման տարեթիվը և արտադրող կազմակերպության անվանումը: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Փաթեթավորումը՝ արկղերով, արկղի մեջ 20 հատ: Արկղերում գլխարկի ներսից գլխարկաբոլոքի լայնքով տեղադրվում է ստվարաթղթե օղակ, գլխարկը չճմրթելու համար: Արկղերը՝ պիտակավորված: Պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Չափսերի սանդղակը. 54 – 60, քանակները՝ ըստ պատվիրատուի պահանջի:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՈՉ ԷԱՃԱՊՁԲ-22/10/Բ/2/Ի՝Ճ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	